ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ք. Էջմիածնի վարչական շենքի նիստերի դահլիճում կայացավ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ք. Էջմիածնի Մ. Մանուշյան փ. 4/5 հասցեում գտնվող, չգործող նախկին մշակույթի տան վերակառուցում՝ մանկապարտեզի նախատեսվող գործունեության նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկում

2025թ-ի օգոստոսի 5-ին, ժամը 11:00-ին **ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ք. Էջմիածնի** վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ **ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ք. Էջմիածնի Մ. Մանուշյան փ. 4/5 հասցեում գտնվող, չգործող նախկին մշակույթի տան վերակառուցում՝ մանկապարտեզի նախատեսվող գործունեության** նախագծի և նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել «Առավոտ» օրաթերթի 2025 թ-ի հուլիսի 3-ի համարում:

Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի և քաղաք Էջմիածնի, նախագծող կազմակերպության, նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման ընկերության («Էկոնոմ էկո» ՍՊԸ) ներկայացուցիչները:

Մ. Զաքարյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը: Այնուհետև խոսքը փոխանցեց **Մ. Խաչատրյանին:**

Մ. Խաչատրյանը ողջունեց մասնակիցներին և իրազեկեց ներկաներին, որ քննարկվող նախագիծը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն, ենթակա է փորձաքննության, որի համար նախատեսվում է 2 հանրային քննարկում: Քննարկումների արդյունքում հնչած առաջարկությունները հաշվի կառնվեն հետագա գործողությունների համար: Այնուհետև Մ. Խաչատրյանը ներկայացրեց ծրագրին և նախագծին վերաբերող որոշ մանրամասներ, հնարավոր բնապահպանական միջոցառումները և ներկաներին հորդորեց տալ հարցեր և ներկայացնել առաջարկներ, այնուհետև խոսքը փոխանցեց նախագծող կազմակերպության ներկայացուցիչ՝ Ս. Նալբանդյանին:

Ս. Նալբանդյանը մանրամասն ներկայացրեց շենքի նախագծային յուրահատկությունները,տվեց հակիրճ պատմական ակնարկ և ծավալվեց ընդհանուր քննարկում:

Այնուհետև քաղաքացիների կողմից հարցեր հնչեցին, մանկապարտեզի մասնավոր և/կամ պետական լինելու մասին, որին ի պատասխան նախագծային թիմի ներկայացուցիչ Ս. Նալբանդյանը պատատասխանեց, ասելով, որ պետական ծրագրով է կառուցվելու և

անհատույց տրվելու է համայնքին և շեշտեց, որ մինչ այդ տվյալ տարածքում մանկապարտեզ չի գործել:

Մ. Զաքարյան հետաքրքրվեց, թե քանի սանի համար է նախատեսված մանկապարտեզը:

Հարցին պատասխանեց Ս. Նալբանդյանը, նշելով 150 սանի մասին :

Հավելյալ հարցերի բացակայության հիմքով հանրային քննարկումն ավարտվեց:

Որոշում.

Ամփոփելով հանրային քննարկումը՝ մասնակիցները հավանության արժանացրին նախագիծը: Որոշվեց այն ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու հաստատմանը:

Քննարկման վարող և պատասխանատու՝ **Մ. Զաքարյան**

Ձեռնարկող՝ **Վաղարշապատի համայնքապետարան**

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով: